ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 9, 1952 Общественные науки

ԱԲՈՒ ԱԼԻ ԻԲՆ-ՍԻՆԱ (ԱՎԻՑԵՆՆԱ)

Ամբողջ աշխարհի առաջավոր մարդկությունը այս տարի նշում է տաջիկ ժողովրդի հանճարեղ զավակ, միջնադարի խոշորագույն էնցիկլոպեդիստ-գիտնական, մեծ մտածող ու բժիշկ Աբու Ալի Իբն-Սինայի (Ավիցեննայի) ծննդյան հազարամյակը։

Աբու Ալի Իբն-Սինան հանդիսանում է աշխարհի այն մեծագույն մտածողներից մեկը, որոնց գիտական ժառանգությունը իրավամբ պատկանում է ամբողջ մարդկությանը, կազմելով նրա փառքի ու հպարտության առարկան։ Այն հսկայական ավանդը, որ մտցրել է Իբն-Սինան համաշխարհային գիտության մեջ, դուրս է բերում նրան իր ժամանակի սահմանափակ շրջանակներից և դասում բոլոր ժամանակների գիտության ու կուլտուրայի կորիֆեյների շարքը, որոնք իրենց գործունեությամբ մեծապես նպաստել են ամբողջ մարդկության լուսավորությանն ու պրոգրեսին, որոնք իրենց բոլոր գիտելիքներն ու ունակությունները, իրենց ողջ տաղանդը ի սպաս են դրել մարդկության բարօրությանը, իրենց գործունեությամբ մարմնավորելով աշխատավոր մարդկանց ձգտումները դեպի գիտությունը, լուսավորությունը և խաղաղ, ստեղծագործ աշխատանքը։

Ահա թե ինչու սովետական ողջ ժողովուրդը, ամբողջ առաջավոր մարդկության հետ մեկտեղ, Խաղաղության Համաշխարհային Խորհրդի որոշմամբ նշում է Աբու Ալի Իբն-Սինայի ծննդյան հազարամյակը, մի մարդու, որը իր բազմաբեղուն գիտական գործունեությամբ խոշոր չափով օժանդակել է Արևելքի ու Արևմուտքի մերձեցմանը և նրանց գիտության ու կուլտուրայի առաջադիմությանը։

* * *

Միջնադարյան Արևելքի մեծ հումանիստ, խոշորագույն բժիշկ, փիլիսոփա, բնագետ, մաթեմատիկոս և բանաստեղծ Աբու Ալի Իբն-Սինայի կյանքն ու գործունեությունը կապված է Սամանիդների էպոխայի հետ, որը Միջին Ասիայի ժողովուրդների և մասնավորապես տաջիկ ժողովրդի տնտեսական ու կուլտուրական համեմատաբար բարձր զարգացման մի շրջանն էր և խոր հետքեր է թողել տաջիկ ժողովրդի պատմության մեջ։ Սամանիդների էպոխայում Միջին Ասիայի ժողովուրդների կուլտուրայի նվաճած բարձունքների մասին են վկայում տաջիկական մեծ պոետ Ֆիրդուսիի «Շահ-Նամե» սքանչելի պոեմը, ինչպես և անմահ Ֆիրդուսու և տաջիկական կուլտուրայի մյուս խոշորագույն ներկայացուցիչների (Ռուդակիի, Դակիկիի և ուրիշների) ողջ գործունեությունը։

Աբու Ալի Իբն-Սինան ծնվել է 980 թվականին, Աֆշանա տաջիկական գյուղում, որը հեռու չէր միջնադարյան կուլտուրայի ամենախոշոր կենտրոններից մեկից՝ Սամանիդների թագավորության մայրաքաղաք Բուխարայից։ Ապագա մեծ գիտնականի ու բժշկի հայրը, Սամանիդների ֆինանսական վարչության մի ոչ մեծ պաշտոնյա, հայտնի էր իբրև բազմակողմանիորեն զար-

գացած մարդ, որը ձգտում էր հնարավոր լավագույն կրթությունը տալ իր որդիներին, նրանց համար իբրև ուսուցիչներ հրավիրելով իր ժամանակի համբավավոր գիտնականներին։ Շնորհիվ իր հոր և ուսուցիչների ջանքերի, բայց

գլխավորապես շնորհիվ իր արտակարգ ընդունակությունների ու աշխատունակության և վերին աստիճանի սուր հիշողության, Իբն-Սինան արդեն 10 տարեկան հասակում ուսումնասիրում էր երկրաչափությունը, աստղաբաշխությունն ու փիլիսոփայությունը։ Տասնեհինգ տարեկան հասակում նա սկսում է ուսումնասիրել բժշկության արվեստը, կարդալով հին աշխարհի բժշկական դիտու-

թյան խոշորագույն հելինակությունների՝ Հիպպոկրատի և Գալենի աշխատությունները։ Բժշկական գիտելիքների ստեղծագործական յուրացման և սեփական դիտողությունների ու բժշկական փորձի շնորհիվ Իբն-Սինան շուտով մեծ հռչակ է ձեռք բերում՝ իբրև հմուտ բժիշկ։ Տասնութ տարեկան հասակում նրան հաջողվում է բուժել Բուխարայի՝ ծանր հիվանդացած սամանյան էմիր Նուխ-բին-Մանսուրին, որը, իբրև հատուցում, թույլ է տալիս երիտասարդ բժշկին օգտվել իր հարուստ գրադարանից։ Հենց այստեղ, իր հայրենի Բուխարայում էլ հասունանում ու ձևավորվում է Ավիցեննան՝ իբրև գիտնական, բժիշկ, փիլիսոփա և բանաստեղծ։ «Երբ լրացավ իմ տասնութ տարին,— գրում է նա հետագայում իր ինքնակենսագրության մեջ,— ես արդեն ուսումնասիրել էի այդ բոլոր գիտությունները, և դրանից հետո ինձ ոչ մի նոր բան չհայտնվեց։ Տարբերությունը միայն նրանում էր, որ այն ժամանակ ես ավելի արագ էի ըմբռնում գիտությունները, իսկ հետո նրանք ավելի հաստատ էին ամրապնդվում իմ մեջ, և ես հիմա ավելի հիմնավոր ու ավելի պարզ գիտեմ այդ գիտությունները»։

Բուխարայի էմիրի գրադարանում Ավիցեննայի գիտական համառ պարապմունքների բախտավոր ժամանակաշրջանը, սակայն, երկարատև չի լինում։ Շուտով վրա են հասնում նրա թափառումների տարիները, երբ Կարախանիդ թյուրքերի հարվածների տակ ոչնչացվեց Սամանիդների պետությունը և երիտասարդ գիտնականը ստիպված եղավ հեռանալ Բուխարայից ու բնակություն հաստատել Խորեզմում։ Այստեղ նոր ուժով ծաղկեց Ավիցեննայի ստեղծագործական գործունեությունը, որին հովանավորում էր Խորեզմի շահ Մամունը։

Ավիցեննային չհաջողվեց երկար մնալ Խորեզմում։ Բուխարայի թյուրք նվաճող Մահմուդ Ղազնեվին Խորեզմի շահից պահանջեց վերադարձնել Բուխարայից Խորեզմ տեղափոխված գիտնականներին և դրանց թվում Իբն-Սինային։ Լսելով այդ լուրը և չցանկանալով ծառայել իր հայրենիքի օտարերկրյա նվաճողին, Ավիցեննան հեռացավ Խորեզմից և մեկնեց հարավ, դեպի Խորասան։ Հետապնդվելով Մահմուդ շահի գործակալներից ու լրտեսներից, որոնք հրաման ունեին վերադարձնել նրան, Ավիցեննան մինչև իր կյանքի վերջը, այսինքն մոտ 30 տարի, թափառում է Իրանում, անցնելով մեկ քաղաքից մյուսը (Ուրգենչ, Գուրգան, Ռեյ, Համադան, Սպահան), իր հետապնդողներից խուսափելու և օտար բռնակալին չծառայելու համար նույնիսկ կտրել-անցնելով Կարա-Կումի լայնածավալ ավազուտները։

Թափառումների այս երկար ու ձիգ տարիները միաժամանակ Ավիցեննայի բեղմնավոր գիտական ու բժշկական գործունեության տարիներն էին։ Հենց այս տարիներին է նա գրել իր 100-ից ավելի աշխատությունների մեծագույն մասը, որոնց թվում իր հռչակավոր բժշկական աշխատությունը «Ալ-Կանուն ֆիտտիբը»-ը («Կանոն բժշկական գիտության») և ոչ պակաս հռչակավոր փիլիսոփայական աշխատությունը՝ «Քիթաբ-ուշ-Շիֆա»-ն («Գիրք ապաքինության»), որոնք երկուսն էլ սկսված էին դեռևս Խորեզմում։ Դրանք տիտանական, լարված աշխատանքի տարիներ էին, մանավանդ որ հաճախակի քաղաքից-քաղաք տեղափոխվելու ստիպված Իբն-Սինան մեծ մասամբ իր ձեռքի տակ չէր ունենում որևէ գրական աղբյուր և ստիպված էր լինում օգտվել իր միակ, բայց անսպառ գիտական գանձարանից՝ Բուխարայի էմիրի գրադարանում կատարած համառ աշխատանքների հետևանքով կուտակած բազմահարուստ գի-

տական պաշարից։ Ավիցեննայի զարմանալի հիշողության, գիտական հսկայական էրուդիցիայի և ստեղծագործական երևակայության մեջ, իբրև մի ֆոկուսում, կենտրոնացած էր իր էպոխայի ամբողջ իմաստությունը։

Ավիցեննան մեռավ տարագրության մեջ, Համադանում, 1037 թ. հունիսի 18-ին, 57 տարեկան հասակում։

* * *

Ավիցեննան թողել է հսկայական գիտական ժառանգություն։ Նրա խոշոր աշխատությունների զգալի մասը կազմված է բազմաթիվ հատորներից. այսպես՝ Բուխարայում նրա գրած «Բժշկական տերմինների բառարանը» բաղկացած է 5 գրքից, «Գիրք ապաքինության» աշխատանքը՝ 17 հատորից, «Կանոն բժշկության» աշխատանքը՝ 5 գրքից, «Մեկնություն Արիստոտելի» աշխատանքը՝ 20 գրքից և այլն։ Իր աշխատությունների մեծ մասը Ավիցեննան գրել է արաբերեն, որը միջնադարյան Արևելքի միջազգային գիտական լեզուն էր, ինչպես լատիներենը՝ Եվրոպայում։ Սակայն նա գրել է նաև իր մայրենի լեզվով՝ տաջիկերենով. օրինակ՝ տաջիկերեն են գրված նրա այնպիսի կարևոր աշխատությունները, ինչպիսիք են «Գիտելիքների գիրքը» և «Տրակտատ զարկերակի մասին» աշխատությունը։

Ավիցեննայի գիտական աշխատությունները բազմաթիվ անգամներ թարգմանվել են հունարեն, լատիներեն, հրեերեն և այլ լեզուներով։ Առանձնապես մեծ հռչակ էր ստացել նրա «Կանոն բժշկության» աշխատությունը, որ բազմաթիվ դարերի ընթացքում, Հիպպոկրատի աշխատության հետ միասին, դասագիրք էր հանդիսանում Մերձավոր Արևելքի ու Եվրոպայի համալսարաններում։ Բժշկական գիտության, փիլիսոփայության, ֆիզիկայի, մաթեմատիկայի, երաժշտության, աստղաբաշխության, բուսաբանության մասին Ավիցեննայի գրած աշխատությունները 600 տարվա ընթացքում կուլտուրական զարգացման աղբյուր են հանդիսացել միջնադարյան Եվրոպայի ու Մերձավոր Արևելքի համար։

Համաշխարհային հռչակ ստացած «Կանոն բժշկության»-ը հանդիսանում է բժշկական գիտությունների մի իսկական էնցիկլոպեդիա։ Այս հոյակապ աշխատության մեջ ընդհանրացվել ու իրենց հետագա զարգացումն են գտել հին հունական, հին հռոմեական, իրանական և հնդկական բժշկական գիտության բոլոր նվաճումները։ «Կանոն»-ի մեջ զարգացման նոր աստիճանի են բարձրացված անատոմիայի, ֆիզիոլոգիայի, պաթոլոգիայի, թերապիայի, ֆարմակոլոգիայի և հիգիենայի մասին այն բոլոր դիտելիքները, որ մինչ այդ կուտակել էր մարդկությունը։ «Կանոն»-ի մեջ ըստ էության սիստեմատիկորեն շարադրված է միջնադարի ամբողջ տեսական ու գործնական բժշկական դիտությունը։ Եվ միանգամայն հասկանալի է, թե ինչու այդ գիրքը, տպագրության գյուտից շատ չանցած, 15—16-րդ դարերում, հրատարակվել է ավելի քան 30 անգամ՝ լատիներեն, հին-հրեերեն և արաբերեն լեզուներով։

Իբն-Սինայի գրչին են պատկանում նաև մի շարք այլ բժշկա-դիտական աշխատություններ, որոնցից առավել կարևորներն են «Տրակտատ սրտի հիվանդության դեղերի մասին», «Տրակտատ զարկերակի մասին», «Կանոններ դեղերի մասին», «Դոդերի և ուռուցքների մասին» և այլն։ Իր բժշկագիտական աշխատությունների մեջ Իբն-Սինան առաջին անգամ առաջ է քաշում այն

ենթադրությունը, թե որոշ հիվանդություններ տարածվում են ջրի միջոցով, որի մեջ դտնվում են մանրադույն անտեսանելի կենդանի էակներ։ Նրա կարծիքով վարակումը կարող է կատարվել այն օդի միջոցով, որով շնչում է մարդը։ Տաջիկ ժողովրդի հանճարեղ զավակ Իբն-Սինան Պաստյորից դեռևս ավելի քան 800 տարի առաջ կանխատեսել էր միկրոբների՝ իբրև վարակիչ հիվանդությունների հարուցիչների գոյությունը։

Մեծ է Ավիցեննայի ավանդը նաև այլ գիտությունների մեջ և մասնավորապես փիլիսոփայության բնագավառում։ Նրա այնպիսի աշխատությունները, ինչպիսիք են «Գիրք ապաքինության»-ը, ուր շարադրված են լոգիկայի, բնագիտության, մետաֆիզիկայի և մաթեմատիկայի հարցերը, ինչպես նաև տաջիկերեն լեզվով գրված «Դոնիշնոմա» («Գիտելիքների գիրք») աշխատությունը, որ ընդգրկում է լոգիկայի, ֆիզիկայի, մետաֆիզիկայի, մաթեմատիկայի, աստղաբաշխության և երաժշտության հարցերը, հանդիսանում են 10—11-րդ դարերի առաջավոր դիտական մտքի լավագույն հուշարձանները։

Փիլիսոփայության բնագավառում Իբն-Սինան հետևում է Արիստոտելին։ Իր աշխատությունների մեջ նա սիստեմատիկաբար ու հետևողականորեն շարադրում է Արիստոտելի բոլոր հիմնական ուսմունքները, մեկնելով Արիստոտելին նեոպլատոնական հասկացողությամբ։ Սակայն Իբն-Սինան Արիստոտելի սոսկական կոմենտատորը չէ, ինչպես այդ փորձում են ապացուցել բուրժուական գիտնականները։ Արիստոտելի մի շարք դրույթները (ինչպես, օրինակ՝ գիտությունների դասակարգման շատ կարևոր հարցը) Ավիցեննայի կողմից քննադատաբար վերանայված են, իսկ ուրիշները լրացված են նրա սեփական դիտողություններով ու եզրակացություններով։ Իբն-Սինայի իբրև գիտության պրոգրեսիվ դործչի համար չափազանց կարևոր է այն հանգամանքը, որ նա հռանդուն կերպով պրոպագանդա էր անում Արիստոտելի ուսմունքի պրոդրեսիվ կողմերը, և այդ այն ժամանակ, երբ քրիստոնեական ու մուսուլմանական հոգևորականությունը, համապատասխան «վերամշակման» ենթարկելով հին աշխարհի այդ խոշորագույն մտածողի լոգիկան, վերածել էր այն սխոլաստիկայի, երբ, Լենինի խոսքերով ասած, հոգևորականությունը սպանել էր այն ամենը, ինչ կենդանի էր Արիստոտելի մոտ և հավերժացրել էր մեռածը[1]։

Իբն-Սինայի փիլիսոփայական ուսմունքը զգալիորեն շեղվում էր մուսուլմանական կրոնի ուսմունքից, քանի որ նա մի կողմից փորձ էր անում դուդակցել հավատը և փիլիսոփայությունը, Ղուրանը և Արիստոտելի ուսմունքը, իսկ մյուս կողմից՝ համաձայնեցնել Արիստոտելի ուսմունքը և նեոպլատոնիզմը։ Այս ամենի հետևանքով Իբն-Սինայի ուսմունքը վտանգավոր էր դառնում մուսուլմանական ու քրիստոնեական ուղղափառ հոգևորականության համար։ Իբն-Սինային հերետիկոս էին համարում այն ռեակցիոն փիլիսոփաները, որոնք ձևականորեն ելնում էին Արիստոտելի ուսմունքից, բայց ըստ էության սպանում էին այն ամենը, ինչ կենդանի էր Արիստոտելի մոտ և ձգտում էին գիտությունը ենթարկել հավատին, փիլիսոփայությունը՝ կրոնին։

Արիստոտելի փիլիսոփայական ուսմունքը իր հիմքում իդեալիստական է ու հակասական։ Ընդունելով աստծու՝ իբրև անճանաչելի, անբացատրելի և անհրաժեշտ էության գոյությունը, նա հակասության մեջ է ընկնում իր իսկ

[1] Տես В. И. Ленин, Философские тетради, 1947, стр. 302.

ուսմունքի մատերիալիստական տենդենցների հետ։ Դրա պատճառը հասկանալի է. լինելով իր պատմական էպոխայի արդյունքը, Իբն-Սինան չէր էլ կարող ազատագրվել կրոնական աշխարհայեցողության գերակշիռ ազդեցությունից։ Նրա փիլիսոփայությունը շարադրում է կրոնական ուսմունքների մի որոշ սիստեմ ճիշտ այնպես, ինչպես որ միջնադարի ամեն մի փիլիսոփայական ուսմունք ստիպված էր ընդունել իշխող կրոնական ուսմունքի մեկնության կամ լրացման ձևը։ Այդ պատճառով էլ Իբն-Սինայի փիլիսոփայության նշանակությունը որոշվում է ոչ թե կրոնական ուսմունքի շարադրությամբ, որ առկա է նրա փիլիսոփայական գործերում, այլ այն բանով, թե ինչ չափով է նրա փիլիսոփայությանը հաջողվել դրավել այնպիսի դիրք, որը քիչ թե շատ անկախ լիներ կրոնից և դրանով իսկ հնարավորություն ունենար բացահայտել իր սեփական էությունը։ Այս տեսակետից նրա փիլիսոփայության համար խիստ բնորոշ է այն, որ Իբն-Սինան դեմ է դուրս գալիս Իսլամի դոգմատիզմին, դրանով իսկ իր հակառակորդների կողմից համարվելով հերետիկոս և ծայրահեղ ազատամիտ մարդ։

Իր մատերիալիստական տենդենցներով Ավիցեննայի փիլիսոփայությունը կատարել է զգալի դրական դեր, մեծապես խարխլելով Ղուրանի ռեակցիոն ուսմունքի հիմունքները։ Նա ուժեղ հարված է հասցրել միջնադարյան մուսուլմանական սխոլաստիկային։ Այստեղից էլ հասկանալի են դառնում այն կատաղի հարձակումները, որոնց ենթարկվում էր Իբն-Սինան մուսուլմանական աստվածաբանների կողմից և մասնավորապես 11-րդ դարի հայտնի թեոսոֆ Ալ-Գազալիի կողմից։ Ցանկանալով ժխտել այն ամենը, ինչ զանազան փիլիսոփայական ուսմունքներում հակասում էր մուսուլմանական հավատի դրույթներին, Ալ-Գազալին իբրև այդ բոլոր «հերետիկոսական» մտքերի կենտրոն դիտում է Իբն-Սինայի փիլիսոփայությունը և նրա դեմ ուղղում իր բոլոր հարվածները։

Իբրև մտածող Իբն-Սինան մի խոշորագույն երևույթ է միջնադարյան Մերձավոր Արևելքի ու Եվրոպայի կյանքում։ Շատ ավելի առաջ, քան արևմտյան երկրների գիտությունը արաբներից ստացավ նրանց թարգմանած՝ Արիստոտելի աշխատությունները, Իբն-Սինայի ստեղծած գիտությունների էնցիկլոպեդիան, որ մշակված էր ըստ Արիստոտելի պլանի, իր խոշոր ազդեցությունն էր կատարել ինչպես Արևելքի, այնպես էլ Արևմուտքի գիտական մտքի վրա։ Իզուր չէ, որ Իբն-Սինային, որ Արևելքում հայտնի էր «շեյխ-ուր-ռաիս» (գիտնականների իշխան) տիտղոսով, Եվրոպայում անվանում էին «երկրորդ ուսուցիչ», երկրորդ՝ Արիստոտելից հետո, որը այդ էպոխայում համարվում էր անսխալական հեղինակություն՝ գիտության և փիլիսոփայության հարցերում։

Իբն-Սինան մեծ դեր է խաղացել նաև տաջիկական ու իրանական գեղարվեստական գրականության զարգացման գործում։ Իր ոտանավորների մեջ, որ գրված են տաջիկերեն լեզվով, նա անարդանքի սյունին է դամում իր զոդափարական հակառակորդներին՝ ոգետ ֆանատիկոսներին, որոնք նրան մեղադրում էին հերետիկոսության մեջ։ Նրա պոեզիան համակված է ազատության ու առաջադիմության ոգով։

Իբն-Սինայի գիտական և գեղարվեստական ողջ գործունեությունը հագեցած է գիտական աշխարհայեցողությամբ, ընդդեմ կրոնական խավարամտության։ Քրիստոնեության և Իսլամի միջև մղվող սուր, ֆանատիկոսական պայքարի այդ էպոխայում Իբն-Սինան ավելի, քան որևէ այլ մարդ, օժանդա-

կել է այն բանին, որպեսզի վերացվեն այն կրոնական պատնեշները, որ բաժանում էին Եվրոպայի ու Մերձավոր Արևելքի երկրներում զարգացող փիլիսոփայությունը, գիտությունն ու պոեզիան։ Ավիցեննան թանգ է մեզ համար իբրև մի էնցիկլոպեդիստ-գիտնական և հումանիստ, որն իր գործունեությամբ մարմնավորում է մարդկային հանճարի զարգացման անսահմանափակ հնարավորությունները։

Առաջավոր մարդկությունը սրբությամբ պահպանում և մեծարում է մեծ գիտնական ու փիլիսոփա Աբու Ալի Իբն-Սինայի հիշատակը։